ԼՈՒՐՋ ԱՒԱՆԴ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԱՒԱՌՈՒՄ

Հայ միջնադարեան քնարերգութեան դերն ու նշանակութիւնը բնաւ չի սահմանափակւում ազգային շրջանակներով: Այն վաղուց դարձել է համաշխարհային գրականութեան եւ մշակոյթի արժէք: Դեռեւս 1916 թ. Վալերի Բրիւսովն իր "Поэзия Армении" անթոլոգիայի նախաբանում նշում էր. «Միջնադարի հայ քնարերգութիւնը մարդկային ոգու ամենանշանակալից մաղթանքներից է, որ գիտէ ամբողջ աշխարհի տարեգրութիւնը»: Բրիւսովի խօսքերի իրաւացիութիւնը հաստատում է այն փաստը, որ վերջին կէս դարի ընթացքում այդ քնարերգութիւնը եղել է սեւեռուն ուշադրութեան առարկայ աշխարհի տարբեր երկրներում, եւ տարբեր լեզուներով թարգմանուել ու հրատարակուել են ինչպէս առանձին բանաստեղծների ժողովածուներ, նոյնպէս եւ անթոլոգիաներ: Այդ ամենը պարտաւորեցնում է հայ գրականագիտութեանն առաւել խորութեամբ եւ բազմակողմանիօրէն ուսումնասիրելու մեր գրականութեան տուեալ շրջանի քնարերգութիւնը: Այս բնագաւառում իր մեծ աւանդն ունի Վարագ Ներսիսեանը: Նա տասնամեակներ շարունակ զբաղւում է միջնադարեան տաղերգութեան ուսումնասիրութեամբ: Դեռ 1976 թուականին նա հրատարակել է «Հայ միջնադարեան տաղերգութեան գեղարուեստական միջոցները» մենագրութիւնը, որն առաջին աշխատութիւնն էր ԺԳ-ԺԶ. դդ. բանաստեղծութեան գեղագիտական քննութեան ուղղութեամբ: Նրա գիտահետազօտական յօդուածները տպագրել են տարբեր ժողովածուներում, այդ թւում նաեւ ֆրանսերէն, ռուսերէն եւ անգլերէն: Վարագ Ներսիսեանի երկար տարիների լուրջ ու արդիւնաւէտ գիտական պրպտումների ամփոփումն է «Հայ միջնադարեան տաղերգութեան ժանրերն ու տաղաչափութիւնը»[1] աշխատութիւնը:

Ուսումնասիրուած նիւթի հսկայական ծաւալի մասին վկայում է օգտագործուած գրականութեան ցանկը, որն ընդգրկում է ինչպէս Մատենադարանի ձեռագիր սկզբնաղբիւրները, նոյնպէս եւ տպագրուած գեղարուեստական ու գիտական աշխատութիւնները հայերէն, ռուսերէն եւ պարսկերէն:

Աշխատութիւնն ունի յստակ կառուցուածք: Առաջաբանում ուրուագծւում են առաջադրուած խնդիրները:

Վարագ Ներսիսեանը նշում է, որ միջնադարի հայ տաղերգութեանը նուիրուած բնագրագիտական աշխատանքներից զատ գրուել են նաեւ վերլուծական բնոյթի գործեր, որոնցում քննուել են մասնաւոր երկերի թեմատիկ ու գաղափարական, մասամբ նաեւ գեղարուեստական ու տաղաչափա-

1 **Վարագ Ներսիսեան**, Հայ միջնադարեան տաղերգութեան ժանրերն ու տաղաչափութիւնը (Ժ-ԺԸ դդ.), Եր., 2008:

կան առանձնայատկութիւնները: Մինչդեռ տեսական առումով միջնադարի հայ տաղերգութիւնը քիչ է ուսումնասիրուել: Ինչպէս փաստում է հեղինակը, գիտութեան տեսադաշտից վրիպել է գրական տեսակների եւ տաղաչափական ձեւերի լուսաբանման խնդիրը: Եւ հէնց առաջին գլխում դրուած է զուտ տեսական խնդիր. ներկայացուած է «տաղ» հասկացութեան արդի ըմբռնումը եւ ցոյց է տրուած, թէ ինչ իմաստով էին օգտագործում այդ հասկացութիւնը հնում եւ միջնադարում: Ե՛ւ տեսական, ե՛ւ գեղարուեստական հարուստ նիւթի ուսումնասիրութեան հիման վրայ նա ցոյց է տալիս, որ «Միջնադարի հայ մտածողների երկերում Ե. դարի վերջից սկսած «տաղ» հասկացութիւնը մեկնաբանուել է միայն գրական նշանակութեամբ... եւ գլխաւորապէս արտայայտել է . «չափածոյ խօսք» կամ «չափածոյ գրուածք» իմաստը» (էջ 27-28):

«Ժանրի բացայայտման հիմունքը. ժանրային համակարգը» գլխում դրուած է տաղի՝ ըստ տեսակների դասակարգման խնդիրը: Ներկայացուած եւ մանրազնին քննութեան են առնուած տաղերի ժանրային տեսակաւորման միջնադարեան չափանիշները՝ գլխաւորապէս ձեռագրական խորագրերի յիման վրայ: Քննութեան առնելով դասակարգման հիմնական սկզբունքները, որոնք կիրառուել են միջնադարում՝ Վ. Ներսիսեանը եզրակացնում է. «Հայ միջնադարը գործնականօրէն վաւերացրել է տաղերի ժանրային տեսակաւորման բաւականաչափ ընդարձակ մի համակարգ» (էջ 39): Այնուհետեւ նա անդրադառնում է այդ համակարգին՝ հիմնական գծերով (գովեստ, պարսաւ, խրատ, ողբ, աղաչանք, գանգատ):

«Ժանրերը» գլուխն ամենածաւալունն է: Այստեղ առանձին-առանձին մանրակրկիտ քննութեան են առնուում տաղերգութեան բոլոր նշուած տեսակները, ցոյց են տրւում այս կամ այն տեսակին բնորոշ տիպաբանական գծերը: Այսպէս, բնութագրելով խրատը՝ Ներսիսեանը գրում է, որ այն «տաղի միւս տեսակներից զատւում է ժանրակազմ երեք հատկանիշներով» (էջ 88). խօսքի յորդորական բնաւորութիւն, ուղղուածութիւն երկրորդ դէմքին եւ քնարականութիւն: Որպէս մի առանձին գրական ենթատեսակ մանրամասն ուսումնասիրելով այն տաղերը, ուր առկայ է վարդի ու սոխակի այլաբանութիւնը, հեղինակը եզրակացնում է, որ դրանք ամենից առաջ բնութագրւում են իրականութեան այլաբանական պատկերմամբ, գլխաւոր կերպարների կայունութեամբ եւ թեմայի միասնականութեամբ (էջ 105): Այստեղ ասենք, որ համեմատելով վարդի եւ սոխակի սիրավէպի հայկական եւ պարսկական մշակումները՝ Վ. Ներսիսեանը մասնաւոր նիւթի վերլուծութեան հիման վրայ եզրակացնում է, որ միջնադարի հայ տաղասացների «տուեալ ժանրով յօրինուած գործերը պէտք է դիտել միանգամայն ինքնուրոյն ստեղծագործութիւններ հայ մտքի, հայ իրականութեան ծնունդ» (էջ 118):

Նշենք նաեւ, որ հեղինակը դիտարկում է այս կամ այն ժանրի դրսեւո-

րումները հայ արձակում եւ չափածոյում: Երբեմն նա ներքին բաժանումներ է կատարում նաեւ տուեալ տեսակի սահմաններում: Այսպէս, խօսելով գովեստի ժանրի մասին, Ներսիսեանը թեմատիկ բաժանում է կատարում՝ առանձնացնելով գովեստների երեք խումբ՝ նա ցոյց է տալիս ամէն խմբին յատուկ գծերը՝ բովանդակութեան, բանաստեղծական եսի դրսեւորման եւ պատկերային համակարգի առումով: Շատ նուրբ եւ համոզիչ են նրա դիտողութիւնները տարբեր բանաստեղծների օգտագործած պատկերների մասին կնոջ գեղեցկութիւնը փառաբանող տաղերում (էջ 57-62): Առանձնացուում են նաեւ այն տաղերը, որոնք ներառում են իրենց մէջ տարբեր ժանրերին բնորոշ յատկանիշներ: Որպէս օրինակ բերուում են տաղեր՝ կառուցուած պարսաւի եւ գովեստի փոխնիփոխ զուգորդմամբ: Ուշադրաւ է, որ Վ. Ներսիսեանը արծարծել է նաեւ միջնադարեան ժանրերի զարգացման հարցը հետագայ՝ ԺԹ – Ի. դարերի պոեզիայում: Բերենք միայն մի օրինակ: Աշխատանքի 77 էջում Ներսիսեանը գրում է. «Պարսաւի ժանրը շարունակեց գոյատեւել նաեւ ԺԸ. դարից յետոյ»՝ նշելով Խ. Աբովեանի, Մ. Նալբանդեանի, Ռ. Պատկանեանի գործերը: «Հէնց ԺԹ. դարի երկրորդ կեսին էլ ժանրն իր հիմնական միտումներով մերուեց առաւել սեղմ քնարական տեսակի՝ էպիգրամի մէջ, որը հետագայում շարունակեց զարգանալ նորագոյն շրջանի հայ բանաստեղծների գրչի տակ (Ալ. Ծատուրեան, Ե. Չարենց, Ն. Զարեան, Հ. Սահեան, Հր. Յովհաննիսեան, Պ. Սեւակ եւ ուրիշներ)»: Այս կարգի նկատառումներով Վ. Ներսիսեանը ցուցաբերում է ոչ միայն միջնադարեան, այլեւ ԺԹ – Ի. դարերի հայ չափածոյի փայլուն իմացութիւն:

Աւելորդ համարելով միջնադարեան տաղերգութեան արդէն ուսումնասիրուած տեսակների հիմնաւոր հետազօտութիւնը, նա այնուամենայնիւ, կանգ է առնում այդ տեսակների առանձին ստեղծագործութիւնների վրայ՝ անելով արժէքաւոր դիտարկումներ: Այսպէս, ուշադրութեան է արժանի Վ. Ներսիսեանի՝ Դաւթակ Քերթողի «Ողբի» մասին այն դիտարկումը, թէ այդտեղ «պատմողական տարրը չունի ինքնակայ նշանակութիւն, այլ սոսկ ծառայում է իբրեւ քնարական մտորումների, զգացմունքների ու ապրումների դրսեւորման անհրաժեշտ միջոց» (էջ 120):

Աշխատութեան յաջորդ գլուխները նուիրուած են հայ միջնադարեան տաղաչափաբանական խնդիրների ուսումնասիրութեանը: Արծարծուում է հարցի պատմութիւնը, բացայայտուում են միջնադարի հայ մտածողների պատկերացումները տաղաչափութեան մասին: Ներսիսեանը մեկնաբանում է Գրիգոր Մագիստրոսի, Վարդան Արեւելցու, Սիմէոն Զուղայեցու եւ միւս մտածողների ու բանաստեղծների ըմբռնումները տաղաչափութեան, բանաստեղծական չափերի, յանգի մասին, պարզաբանում այլեւայլ հարցեր: Օրինակ, Գրիգոր Մագիստրոսի օգտագործած «կշիռ» եզրոյթը որոշ բանասէրներ հասկացել են իբրեւ «յանգ», ուրիշները նոյնացրել են այն չափի հետ: Սակայն հեղինակի կարծիքով, Մագիստրոսը որոշակիօրէն զանազանել

է չափ, կշիռ եւ յանգ հասկացութիւնները: Քանի որ Մագիստրոսը խօսում է արաբական բանաստեղծութեան բնորոշ երեւոյթի մասին, Վ. Ներսիսեանը դիմում է արաբական տաղաչափութեանը եւ ցոյց է տալիս, որ «վուազան» (կշիռ) տաղաչափական եզրն արաբերէնում արտայայտում է մի կողմից՝ բանաստեղծական չափ, միւս կողմից՝ վանկաշեշտում, չափոգում, տակտ, ռիթմ նշանակութիւնները, բայց ոչ երբեք՝ յանգ» (էջ 143): Հետազօտած է՛ւ տեսական, է՛ւ գեղարուեստական հարուստ նիւթի հիման վրայ նա եզրակացնում է, որ «միջնադարում գոյութիւն է ունեցել խօսքի ռիթմիկ կառուցման որոշակի ձեւաւորուած զգացողութիւն» (էջ 155):

Քննարկւում է նաեւ միջնադարեան տաղերի տաղաչափութեան բնոյթի հարցը, որն, ինչպէս նշում է Վ. Ներսիսեանը, գիտական ուսումնասիրութեան առարկայ դարձաւ միայն նոր ժամանակներում: Նա բնութագրում եւ գնահատում է Արսէն Բագրատունու, Մ. Աբեղեանի, Էդ. Ջրբաշեանի վաստակն այդ ոլորտում: Անդրադառնալով տաղերի չափի տեսակներին՝ նա առանձնացնում է զուտ վանկային սկզբունքով յօրինուած գործեր (գրուած հաւասար վանկաթուերի ռիթմով): Սակայն, ինչպէս նշում է նա, միջնադարեան տաղերի զգալի մասի համար ռիթմի նախապայման է շեշտային յատկանիշների առկայութիւնը: «Նիւթի ուսումնասիրութիւնը, - գրում է Վ. Ներսիսեանը, - ցոյց է տալիս, որ միջնադարի հայ քնարերգութեան մէջ առկայ է շեշտական ռիթմի կուլտուրան» (էջ 160): Նա բնութագրում է առաւել տարածուած չափերը, նշում դրանց էական յատկանիշները, բերում է վիճակագրական տուեալներ այս կամ այն չափի գործածութեան կամ շեշտադրութեան բնոյթի վերաբերեալ: Ամեն չափի մասին խօսելիս նա ճշտում է տուեալ չափի տարածման ժամանակագրական սահմանները, ցոյց տալիս, թէ ինչ զարգացում են ապրել այդ չափերը: Նրա եզրակացութիւնները հիմնուած են հսկայական նիւթի ուսումնասիրութեան վրայ: Հեղինակն առանձնացնում եւ մանրամասն հետազօտում է նաեւ ոտանաւորի մի քանի տեսակներ, որոնցով գրուել են սակաւաթիւ տաղեր, օրինակ, հինգվանկանի միանդամը (էջ 209-210), յոթվանկանի երկանդամը (էջ 216-219) եւ այլն: Այսպիսով, Վ. Ներսիսեանի ուշադրութիւնից չի վրիպել միջնադարում օգտագործուած եւ ոչ մի բանաստեղծական չափ. բոլորն առանձնացուած եւ բնութագրուած են: Եւ վերջապէս նոյն մանրակրկիտ վերլուծութեանն են արժանացել տաղերի տան կառուցման եւ յանգի բնոյթի հարցերը: Վ. Ներսիսեանը վեր է հանում բանաստեղծական տան կառուցման սկզբունքները, բացայայտում է այդ ոլորտում Մագիստրոսի եւ Շնորհալու աւանդը, ցոյց տալիս, որ միջնադարի տաղերգութեանը յատուկ է միատեսակ տնատման սկզբունքը, իսկ բանաստեղծական տների միւս տեսակները գործածուել են հազուադէպ: Նա եզրակացնում է, որ ԺԳ-ԺԸ. դարերի հայ քնարերգութիւնը հարուստ չէ տների բազմազանութեամբ:

Քննելով յանգի զարգացման ընթացքը՝ տարբեր օրինակների հիման վրայ

Վ. Ներսիսեանը ցոյց է տալիս, որ յանգանման որոշ երեւոյթներ նկատւում են ե՛ւ հեթանոսական շրջանում, ե՛ւ Ե-Ժ. դարերում, սակայն «մինչեւ ԺԱ. դարը մեր բանաստեղծութիւնը հիմնականում եղել է անյանգ» (էջ 230):

Ներսիսեանը նշում է երեք էական ազդակներ, որոնք վճռական դեր են խաղացել հայ գրաւոր բանաստեղծութեան մէջ յանգի հաստատման գործում: Դրանք են՝ ժողովրդական բանաբւեստի իւրացում, հարեւան ժողովուրդների հետ ունեցած գրական շփում եւ ազգային բանաստեղծութեան բնականոն զարգացում: ԺԱ-ԺԸ. դարերի հայ քնարերգութեան մէջ նա առանձնացնում է յանգաւորման տարբեր ձեւեր, նշում է նոյնայանգ երկերում անյանգ տողերի առկայութիւնը, ինչպէս նաեւ փոփոխական յանգով յօրինուած տաղեր: Շատ կարեւոր է, որ հեղինակն ուշադրութեան է արժանացնում եւ յանգի հնչիւնական կազմը: Նա բազմաթիւ օրինակներով ցոյց է տալիս, որ հնչիւնական կազմութեան տեսակէտից միջնադարի տաղերգուները գործածել են տարբեր ուժգնութեան յանգեր:

Վ. Ներսիսեանի սոյն ուսումնասիրութեան մէջ առաջին անգամ ամբողջական քննութեան են առնուած միջնադարեան հայ տաղերգութեան ժանրերի եւ տաղաչափութեան խնդիրները: Հետազօտման նիւթը, ինչպէս գեղարւեստական, նոյնպէս եւ գիտական, ուսումնասիրուած է նախանձելի ամբողջականութեամբ եւ խորութեամբ: Եզրակացութիւնները համոզիչ են եւ, ինչպէս կարծում ենք, անվիճելի: «Հայ միջնադարեան տաղերգութեան ժանրերն ու տաղաչափութիւնը» աշխատութիւնը լուրջ աւանդ է միջնադարեան հայ քնարերգութեան ընդհանուր խնդիրների եւ զարգացման ընթացքի գիտական հետազօտման տեսանկիւնից: Կուզէի նշել եւ շարադրանքի ոճը՝ յստակ, գեղեցիկ, զերծ որեւէ աւելորդութիւնից կամ կրկնութիւնից:

ՄԱԳԴԱ ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆ